

արտաքին բարենորոգութեան կարիք ունի, այլ և պահանջում է խորասուզուել և պարզել կրօնական-փիլիսոփայութեան դիտակցութիւնը, ժամանակակից քաղաքակրթութեան կարիքների և հարցերի կրօնական լուսաբանութիւնը: Ահա այդ պատճառով ինչ չափով միայն թոյլ կը տան ամենօրեայ թերթի էջերը, մենք կաշխատենք տեղ տալ նաև կրօնի, փիլիսոփայութեան, գրականութեան և գեղարուեստին վերաբերեալ խնդիրներին»:

Յիշեալ թերթի ղեկավարներն են ուսուցչապետ Բուլղա-կովն ու Վ. Ժանկին, որոնք մեծ ծառայութիւն են մատուցել Վ. Սալաւեօվի կրօնական գաղափարները ժողովրդի մէջ ասարժե-լուն և թէև չորս-հինգ համարը հրատարակելուց յետոյ յիշեալ թերթը դադարեցրած է կառավարութեան կարգադրութեամբ, սակայն յոյս կայ, որ նա նորից կը հրատարակուի և բաւակա-նութիւն կը տայ մեզանում հետզհետէ աճող ճշմարիտ կրօնա-կան հետաքրքրութեան պահանջներին:

ԿԱԹՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻ

Ներկայ պապի ժամանակ, որը իւր նախորդից համեմատաբար աւելի փոքր կրթութիւն ունի, հազեւոր իշխանութիւնը առաւել յաճախ և խիստ է հանգէս դալիս կաթոլիկութեան մէջ երեւացող յառաջագիմական շարժման դէմ, որի նպատակն է բաւականութիւն տալ ժամանակակից մատուր կեանքի պա-հանջներին: Վերջին ամիսներին մի շարք միջոցներ գործադրուե-ցին այդ ուղղութեան հետեւող մասնաւոր անհատների դէմ: Անգլիայում Հռովմի հրամանով յիսուսականների կազմից հե-ռացրին կաթոլիկ դրող ժորժ Տիրալին իւր այն ազատամտու-թեան համար, որ նա ցոյց է տուել իւր 1903 թուին հրատա-րակած „Lex Orandi“ գրքի մէջ և մանաւանդ վերջերս հրատա-րակած մի անօնիմ նամակի մէջ, որ ուղղուած է իւր ընկեր՝ մարդարանութեան ուսուցչապետին: Այդ վերջին գրութեան մէջ հեղինակը բացատրում է գիտութիւնը կրօնի հետ հաշտե-ցնել չկարողացող և եկեղեցուց հեռանալ ցանկացող գիտնակա-նին, որ դաւանանքների մէջ նշանաւոր է նրանց հազեւոր և բա-րոյական միտքը, իսկ մնացածը մարդկային խելքի արդիւնք է, որը ենթակայ է մոլորութեանց և հետեւապէս հեշտութեամբ կարող է մերժուել: Հռովմում եղուիտներ շնորհիւ պաշտօնից զրկուած է պապական սեմինարիայի եկեղեցական պատմու-

թեան ուսուցչապետ Բօնայուտին, յառաջագիմական թերթի խմբագիրը և այլն:

Կամաց կամաց սկսում ենք դառնալ միջին դարերին, բայց շատ և շատ ուշ է արդէն:

Церк. Вѣстникъ թերթը հաղորդում է, որ ներկայ Պիոս X պապի օրօք բոլորովին փոխուել է կաթոլիկ եկեղեցու քաղաքականութիւնը միւս եկեղեցիների վերաբերութեամբ: Մինչդեռ ևս XIII պապը խիստ քաղաքագիտաբար և տաքտով էր վերաբերում պրաւօսլաւ եկեղեցիներին, Պիոս պապը սկիզբ դրեց նոր քաղաքականութեան և միանգամայն յեղաշրջեց հինը: Նա սկսեց շատ խիստ վերաբերուել արևելեան եկեղեցիներին՝ պրօպագանդայի բոլոր ձևերը թոյլատրելի համարելով պրաւօսլաւ երկիրներում: Նոր ուղղութեան ամենաթարմ ապացոյցն է պապի զիւանի պաշտօնական առաջարկը Բօլգարիային՝ կաթոլիկութիւն ընդունելու մասին: Այդ բանում Վատիկանի և Բօլգարիայի մէջ միջնորդի դերը կատարել է Պլօվդիւի արքեպիսկոպոս մօնսինեօր Մէնին, որ և պաշտօնական յարաբերութեան մէջ է մտել բօլգարական սինօդի հետ: Այդպիսի միութեան շարժառիթներն են քաղաքական և եկեղեցական պատճառներ: Եկեղեցական շարժառիթներն արդիւնք են յոյն-բօլգարական հերձուածի, որի շնորհիւ բօլգարները ոչ թէ միայն հեռու են պահում իրենց, այլ ուղղակի թշնամաբար են վերաբերում գէպի յոյները: Մէնինի ներշնամքը բուլղարական եկեղեցին իրեն յայտարարելով Հռոմին ենթակայ, կը ճանաչուի կանոնական, արևելեան եկեղեցիներին նման կունենայ սեփական պատրիարք և միանգամայն կը վերացնի հերձուածի խնդիրը: Ինչ կը վերաբերի այդ խնդրի քաղաքական նշանակութեան, նա կարտայայտուի նրանով, որ բօլգարների վիճակը Մակեդոնիայում կը բարւոքուի, որովհետեւ կաթոլիկ պետութիւնները Հռոմին նախաձեռնութեամբ յանձն կառնեն բօլգարների պաշտպանութիւնը յոյն և սերը պրօպագանդայից և թշնամութիւն առաջ չի բերել Ռուսաստանում, որտեղ արդէն յայտարարուած է խղճի ազատութիւն: Արքեպիսկոպոս Մէնինի առաջարկը ահագին փոթորիկ է առաջ բերել Բօլգարիայում. բօլգարական սինօդը բողոքել է այդ առաջարկի դէմ և խիստ գրութեամբ վերդարձրել դաւանութեանց նախարարութեան, որի միջոցաւ և ստացել էր յիշեալ առաջարկը:

Զարմանալի է Հռոմի ցանկութիւնը. կերեւի միութեան նա-

խընթաց փորձերը դեռ չեն ութափեցրել նրան և փառասէր նուաճողական քաղաքականութիւնը դեռ երկար պէտք է զբաղեցնի պապական կարդինալներին և արքեպիսկոպոսներին: Ո՛չ, կաթոլիկ եկեղեցու քաղաքական փառասիրութիւնը այնպէս է խեղդել քրիստոնէական վարդապետութիւնը և դիմացիներին էլ հարկադրել նման անպէտք զէնքերով պաշտպանուելու, որ երբէք ցանկալի չէ այդ կրօնական բռնապետութեան նոր արշաւանքն ու յաղթանակը:

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԵԿԵՂԵՅԻՆ

Ե Ի

ԲԱՆԻՈՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Վերջին ընտրութիւններէ ժամանակ, ինչպէս յայտնի, է բանւորները մեծ յաջողութիւն ունեցան և պարլամէնտում 40 տեղ գրաւեցին: Այդ երևոյթը շատ խօսք և զոյցի նիւթ դարձաւ և ի միջի այլոց առիթ տուեց եկեղեցու ներկայացուցիչներին յայտնելու իրենց կարծիքը եկեղեցու և բանւոր դասակարգի յարաբերութեանց մասին: Սկզբում երկիւղալի համարեցին և հակակեղեցական բանւորների քաղաքականութիւնը, սակայն վերջը այդ երկիւղը տեղի տուաւ այդ խնդրի առաւել խորունկ և արժանաւոր գնահատութեան:

«Եկեղեցին բանւորներից երկիւղ կրելու ոչինչ չունի, գրում է «Church Times»-ի թղթակիցը. Բանւորները հանդէս են գալիս ոչ թէ քրիստոնէական եկեղեցու, այլ նրանց դէմ, որոնք արգելք են հանդիսանում իրենց ցանկացած ազգային մեծ բարենորոգումների իրագործմանը: Եթէ եկեղեցին նուիրուի իւր անմիջական գործին՝ աղքատների պաշտպանութեանը, այդ դէպքում նա բանւորների հետ ընդհարումներ չի ունենալ: Բանւորների ձգտումներն՝ ոչնչացնելու սօցիալական հակասութիւնները, բարելաւելու աշխատանքի պայմանները և տնտեսական ու ընկերվարական արդարութիւն մտցնելու ջանքը ինքն ըստ ինքեան բոլորովին քրիստոնէական են և եկեղեցին կարող էր միանալ այդ շարժմանը: Եկեղեցու համար չի կարող գոյութիւն ունենալ աւելի մեծ դժբաղդութիւն, քան բանւորական շարժումից իրեն հեռու պահելը: Եկեղեցու պետութիւնից բաժանուելը ոչինչ է՝ հոգեւորականների աղքատների սրտից բա-